ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մայիսի 2014 թվականի N 74 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» N1180-Ն որոշման 4-րդ գլխի 18-րդ կետի 4-րդ ենթակետի, 2010թվականի հունիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին» N824-Ն որոշման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի 5.05.2014թ. N20/356 գրության, **ո ր ո շ ո ւ մ ե մ՝**

1.Հաստատել Սյունիքի մարզի տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման գործընթացի նախապատրաստման պլանը՝ համաձայն հավելվածի:

2.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2014թ. մայիսի 6
ք. Կապան